ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 թվականի N: 50 - Ա ք.Գյումրի

ԱՔՍԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ «ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 7-րդ և 8-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Աքսաննա Պողոսյանի 2024 թվականի փետրվարի 13-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Աքսաննա Պողոսյանին 2024 թվականի փետրվարի 14-ից, մինչև վեց ամիս ժամկետով, նշանակել «Ամասիայի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի պաշտոնի նշանակումը:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է